եւ Հինդիկուշ լեռների շարունակութիւնն են, որոնք ուղղած են դէպի արեւմուտ եւ հասնում են Փոքր-Ասիայի արեւմտեան ափերը, մինչեւ Եգէական ծով։ Հայկական Պար լեռները Մասիսից եւ Արագածից շարունակելով իրենց ընթացքը Կարսի եւ Բասէնի միջով մտնում են Ճորոխի Աւազանը Կանդիլ եւ Դումլու լեռներ անունով։ Հայկական Տաւրոս լեռները Կարնոյ գաւառի հարաւից՝ Փարան-Թեօքեան եւ Սրմանց-Բին-Գեօլ «Բիւրակն» լեռների շարունակութիւնը՝ մտնում են նոյնպէս Ճորոխի Աւազանը Կարբէլ լեռնաշղթայով, որը Ճորոխի եւ Եփրատի ջրբաժան գիծն է կազմում։ Հիւսիսից Վրաստանի լեռնաշղթան շարունակելով՝ Գուրիան բաժանում է Աջարիայից, Ճորոխի Աւազանը Բիոնի աւազանից։ Պոնտոսի կողմից Պոնտական լեռնաշղթան՝ Պարխար, Քաչկար, Վարչամ-Բէգ եւ Զափանց բաժանում են Ճորոխի Աւազանը Պոնտական առուակներից, որոնք թափւում են Սեւ ծովը։

Ճորոխի Աւազանի արեւելեան սահմանները շարքով բռնել են՝ Զուրուխ-Նարին-Բաշի, Շահվէրդինա (Շահվերդի), Նասմարա, Սամսոնոսմթա, Կարա-Թեփէ, Կանդի, Արսիան, Եալանուզ-Զամ, Թավ-Կալա, Դիւց, Դիք, Սինէքլի-Թէփէ, Եազլի, Բիլբուլան, Կրաչ-Թէփէ, Կուրդիման, Եասամալ, Եալավուզ-Զամ, Գերմուջէք, Զամպ,